

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հայոց ցեղասպանության բիրաւոր զոհերու յիշատակը ոգեկոչուեցաւ Գերմանիոյ զանազան համայնքներու եւ քաղաքներու մէջ: Համայնքային կեդրոնական ձեռնարկները տեղի ունեցան 24 Ապրիլին Գերմանիոյ մայրաքաղաք Պետլինի, ինչպէս նաեւ Քէօլնի մէջ:

Քէօլնի հայ համայնքի ձեռնարկը, որուն իր ներկայութիւնը բերաւ նաեւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան, տեղի ունեցաւ առաջնորդանիստ Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցւոյ մէջ: Եկեղեցին ամբողջապէս լեցուն էր հայ ու ոչ հայ ներկաներով, պաշտօնական եկեղեցական հիւրերով: Հիմնական բանախօսն էր յայտնի հրապարակագիր, Հայ Եկեղեցւոյ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի շքանշանակիր Ռալֆ Ճորտանոն: Բացի հարգելի Ճորտանոյէն, խօսք ըսաւ Գերմանական Խորհրդարանի անդամ Տիկ. Ուրսուլա Հայնէն: Ձեռնարկը եզրափակուեցաւ առաջնորդ Սրբազանի արտասանած հոգեհանգստեան աղօթքով, մասնակցութեամբ ներկայ հոգեւորականներու դասին:

Պետլինի հայ եկեղեցական համայնքը 23 Ապրիլ 2006-ին Եղեռնի յիշատակին կազմակերպած էր լեցուն յայտագիր մը, որ սկսաւ նոյն օրը Լուիզըն համայնքի Աւետարանական եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնով: Արարողութեան նախագահեց եւ ապա յաւուր պատշաճի քարոզ մը խօսեցաւ շրջանի հովիւ Հոգեշնորհ Տ. Խաչատուր արքեպ. Կնեագեան:

Յուշատօնի աշխարհիկ բաժինը կատարուեցաւ Հայ Տան մէջ, ուր բացման խօսք ըսաւ վարչութեան ատենապետուհի Տիկին Սոնա Այփէր: Օրուան ամենահետաքրքրական պահն էր մանուկներու ներկայացուցած «Վերջին Մտածումը» անուանուած թատերախաղը, որ նուիրուած էր հայոց նահատակներուն: Իսկ պարոն Մարաշ, որ գիտական աշխատանքներ ու հրատարակութիւններ ունի Ցեղասպանութեան մասին, խօսք առնելով, պատասխանեց ներկաներու Ցեղասպանութեան առնչութեամբ տուած հարցումներուն:

Ընդմիջումներուն երգչուհի Մարօ Ֆարմանեան հայկական դասական երգերով հարըստացուց հնչած ելոյթները եւ հանդիսութիւնը փակուեցաւ Հայր Սուրբի աղօթքով:

Հանաուի հայ համայնքին ձեռնարկը տեղի ունեցաւ 23 Ապրիլ 2006, քաղաքի Վալոնիշ-Նիտերլէնտիշէ եկեղեցւոյ մէջ: Տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, որուն աւարտին հայերէն եւ գերմաներէն լեզուներով յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ շրջանի հոգեւոր հովիւ Սերովլէ վրդ. Իսախանեան: Այնուհետ Սերովլէ Հայր Սուրբը իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Ֆրանքֆուրթի Հայ մշակութային միութեան ձեռնարկին, որուն հիմնական բանախօսն էր Գերմանիոյ Պօխում քաղաքի համալսարանին կից գործող Սփիւքի եւ Ցեղասպանութեան ուսումնասիրման գրասենեակի պատասխանատու աշխատակից Տիկ. Քրիսթին Փլաթ: Ցիշատակի խօսք արտասանեց նաեւ Գերմանահայոց կեդրոնական խորհուրդի ատենապետ տոքթ. Շաւարշ Յո-

վասափեան: Ձեռնարկը եզրափակուեցաւ Սերովբէ վարդապետի արտասանած հոգեհանգստեան աղօթքով:

Նոյն օրը, երեկոյեան, Սերովբէ վրդ. Իսախանեան եւ Տ. Հայագատ քինյ. Մարտիկեան իրենց մասնակցութիւնը բերին **Նոյվիտի** հայ համայնքի ձեռնարկին, որ կազմակերպուած էր շրջանի Միջեկեղեցական մարմնի աջակցութեամբ: Հիմնական բանախօսն էր հայ երիտասարդ իրաւաբան եւ Թեմական Խորհուրդի անդամ Բլիաս Գեորգ Ուեար: Ողջոյնի եւ յիշատակի խօսք ըսաւ նաեւ Նոյվիտի գլխաւոր քաղաքապետ Նիքոլաուս Ռոթ: Ձեռնարկի ընթացքին մեծ պաստառի վրայ ցուցադրուեցան Յեղասպանութիւնը վկայող, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի պատմական յուշարձաններու եւ եկեղեցիներու փառաւոր անցեալը եւ տխուր ու անմխիթար ներկան ներկայացնող պատկերներ: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն՝ ի յիշատակ հայոց բիրաւոր նահատակներուն:

Համալուրկին մէջ Ապրիլ 24-ին Համալուրկահայ մշակութային միութիւնը Մեծ եղեռնի զոհերու յիշատակին կազմակերպած էր հայ դասական երաժշտութեան եւ գրականութեան նուիրուած միջոցառում մը: Դաւիթ եւ Վիւաս հայկական նուագախումբերը ներկայացուցին հայ եւ օտար երաժիշտներու գործերը, իսկ ասմունքող Պենետիքթ Վերմեր բաժիններ կարդաց Էտկար Հիլզէնրաթի «Վերջին մտքի հեքիաթը» գիրքէն:

Շթութկարթի կեդրոնական գերեզմանատան մէջ գտնուող յուշարձանի առջեւ 24 Ապրիլին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն: Իսկ 30 ապրիլին ոգեկոչման հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Պատեն-Վիրթեմպերկի հայ համայնքի, Շթութկարթի Մշակութային միութեան եւ Էսլինկէնի Մշակութային եւ Մարզական միութեան համատեղ նախաձեռնութեամբ Կէօփինկէնի Հայ Տան մէջ: Յուշատօնին իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ հայեր եւ օտարներ: Յայտագրի բանախօսներն էին թուրք հեղինակ Տողան Աքհանլը եւ Իշխան սրկ. Զիֆթճեան: Հանդէս եկաւ նաեւ Տիկին Վիլմա Փիլիպոսեան, որ շարժանկարներով ներկայացուց Յեղասպանութեան ամբողջ պատմութիւնը եւ նախադրեալները: Երաժշտական կատարումներով յանդէս եկաւ երիտասարդ հայ աղջիկներու երգչախումբը եւ, իբրեւ մենակատար, Լեռնիկ Գասպարեան:

Պրաունշվայկի Պրիւտերն եկեղեցւոյ բակին մէջ գետեղուած խաչքար-յուշարձանի առջեւ 31 Ապրիլին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հոգեշնորհ Տ. Խաչատուր արեղայ Կնեագեանի եւ Տ. Հայագատ քինյ. Մարտիկեանի կողմէ՝ մասնակցութեամբ Քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներու եւ հայ ու գերմանացի հաւատացեալներու: Արարողութենէ ետք տեղի ունեցաւ յուշ-երեկոյ:

Յիշատակի եւ ոգեկոչման ձեռնարկներ տեղի ունեցան նաեւ Գերմանիոյ Նիւրնպերկ ու Միւնխէն քաղաքներու մէջ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ